Ս.ՇՏԻԿՅԱՆ

ԵՐԱԽՏԱՎՈՐ ԳՐԱԿԱՆԱԳԵՏԸ

Ընթերցող և գիտական հասարակայնությունը նշում է ականավոր գրականագետ Սուրեն Աղաբաբյանի ծննդյան 50-ամյակը: Լայնորեն հայտնի մի անուն է այս, որը պերճախոս հանձնարարականների կամ երկար-բարակ բնութագրականների կարիք, թերևս, չունի:

... Կիրովականցի այգեգործ Բարդուղ Աղաբաբյանը և նրա կին Աննան դեռ մանկուց կարողացան նկատել իրենց որդու՝ Սուրիկի սերը դեպի գիրն ու գրականությունը: Այդ էր պատճառը, որ նրանք շատ էլ չզարմացան, երբ որդին Կիրովականի միջնակարգ դպրոցը բարձր գնահատականներով ավարտելուց հետո, նրանց տեղեկացրեց, որ որոշել է իր ուսումը շարունակել Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում: Այդպես էլ եղավ: 1940 թվականին Աղաբաբյանին արդեն տեսնում ենք համալսարանի ուսանողների թվում: Այստեղ նույնպես իր դրսևորումն են գտնում նրա գրականագիտական հակումները: Այստեղ էլ Աղաբաբյանի անունը մշտապես հիշատակվում է ֆակուլտետի գրասեր երիտասարդների թվում: Թվում էր, թե ամեն ինչ լավ էր սկսվել, մանավանդ որ, հանրապետության պարբերականներում արդեն սկսել էին երևալ Աղաբաբյանի հոդվածները, սակայն 1941 չարաղետ թվականը շատ-շատերի հետ մեկտեղ եկավ վերիվար շրջելու նաև նրա կյանքի ուղին:

Ի թիվս ռազմաճակատ մեկնող հազար-հազարավորների, Սուրեն Աղաբաբյանն էլ քայլեց պատերազմի արյունոտ քառուղիներով և ավելի քան երկու տարի ստիպված եղավ գրչի փոխարեն գործածել իր համար այնքան անհարազատ զենքը: 1944 թվականին վիրավորվելուց հետո, զորացրվելով գործող բանակից, Աղաբաբյանը հաջողությամբ հանձնում է համալսարանի ավարտական քննությունները և 1945 թ. հունիսից աշխատանքի է անցնում ՀԼԿԵՄ Կենտկոմի օրգան «Ավանգարդ» թերթում:

Գործաշատ, լարված աշխատանքը, սկզբում բաժնի վարիչի, ապա թերթի պատասխանատու քարտուղարի պարտականությունները, որոնք, ի դեպ, Աղաբաբյանը

կատարում էր օրինակելիորեն, արգելք չհանդիսացան, որ նա շարունակեր հանդես գալ սովետահայ գրականությանը նվիրված նորանոր շահեկան հոդվածներով։ «Ավանգարդի» տարեց աշխատողները դեռ այսօր էլ հիշում են իրենց թերթում հրատարակվող Աղաբաբյանի՝ մեկից ավելի գրախոսականներն ու քննադատական հոդվածները, իսկ ի պատիվ նույն «Ավանգարդի» պետք է ասել, որ նա էր, որ կարողացավ մինչև վերջ բացահայտել ու հասունացման հասցնել Աղաբաբյան-գրականագետին։ Երևույթի բնականոն հետևանքն այն եղավ, որ 1950 թվականին, «Գյուղը Նաիրի Զարյանի ստեղծագործության մեջ» թեմայով դիսերտացիայի պաշտպանությամբ, Սուրեն Աղաբաբյանին շնորհվեց բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան։ Գրականագետի բեմելը կայացել էր։

Աղաբաբյանի գրականագիտական գործունեությունը նոր թափ ու ծավալ է ստանում 1951 թվականից սկսած, երբ նա աշխատանքի է անցնում Գիտությունների ակադեմիայի Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում, որպես սովետահայ գրականության բաժնի ավագ գիտաշխատող։ Իրեն արդեն լավ դրսևորած երիտասարդ քննադատը ամբողջացնում է Նաիրի Զարյանի մասին գրած իր արժեքավոր ուսումնասիրությունը, որը հրատարակվում է Երևանում, 1954 թ. (նույնը որոշ վերամշակումներով՝ ռուսերեն, 1966 թ.), պարբերականներում շարունակում է հանդես գալ սովետահայ գրականության շրջադարձային հարցերին, սովետահայ մեծ ու փոքր հեղինակներին նվիրված հոդվածներով, որոնցից շատերը այսօր էլ պահպանում են իրենց այժմեականությունը։ Եվ եթե այս բոլորին էլ ավելացնենք, որ 1950 թվականից սկսած մինչև 1954 թ. , Աղաբաբյանը համատեղության կարգով վարում էր «Սովետահայ գրականություն և արվեստ» ամսագրի գրական-քննադատական բաժնի վարիչի՝ ամենևին էլ ոչ դյուրին պարտականությունները, ապա համապատասխան մեկնաբանություններն արդեն ավելորդ կլինեն։ Այս ամենից հետո հասկանալի է դառնում, թե ինչու Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի ղեկավարությունը, նկատելով իր աշխատակցի գրականագիտական հմտությունն ու կազմակերպչական կարողությունները, 1955 թ. կեսերից նրան վստահեց Սովետահայ գրականության բաժնի վարիչի պարտականությունները։

Քանակապես շատ և գիտական տարողության տեսակետից բազմաբնույթ էին այն դժվարությունները, որոնք ծառացած էին ինչպես ամբողջ սովետահայ գրականության բաժնի, այնպես էլ նրա նորընտիր վարիչի առջև։ Չկար սովետահայ գրականության՝ քիչ թե շատ ամբողջական գիտա-ակադեմիական պատմությունը։ Մի մեծ պակաս էլ սա, որը ինքնին արդեն խոսում էր իր մասին։ Չնայած «կալանքից» արդեն ազատվել էր Եղիշե Չարենցը, բայց հրապարակի վրա ոչինչ չկար նրա ստեղծագործություններից, իսկ նրա մասին գրված մեկ-երկու գրքույկները հեռու էին բավարար լինելուց։ Նույն ձևով և գրեթե նույն վիճակում «հերթի էին սպասում» սովետահայ մյուս դասականները՝ Թոթովենցը, Բակունցը և այլոք։ Քառասունական թվականներից մեկնարկ էր վերցրել և 50-ական թվականներին որոշակիորեն իրեն զգացնել էր տալիս բուրժուական գրականագիտության այն վտանգավոր տեսությունը, որի նշանաբանն էր՝ «Չկա սոցիալիստական ռեալիզմ, այլ կա ռեալիզմ սոցիալիզմի ժամանակ»։ Բնականաբար հարկավոր էր հիմնավորապես անդրադառնալ ինչպես այդ տեսությանը, այնպես էլ նրան ծնող ու սնող պատճառներին։ Մոտավորապես այդ նույն ժամանակներից էր, որ ծայր առավ «Գյուղագրական դպրոցի»՝ առաջին հայացքից անմեղ թվացող ուսմունքը, ըստ որի գյուղական թեմատիկայով ստեղծագործող հեղինակները պետք է դիտվեն ու քննվեն միայն որպես գյուղագիրներ։ Ստացվում էր, որ հայ իրականության մեջ գյուղագիրներ էին Աբովյանը, Պռոշյանը, Աղայանը, Թումանյանը, ընդհուպ մինչև Բակունց, Խանզադյան, Սահյան ու Հրանտ Մաթևոսյան։ Մի տեսակետ էր սա, որի սխալ ու հակագիտական լինելը պետք էր ըստ ամենայնի մեկնաբանել ու արմատախիլ անել։ Անհրաժեշտ էր հատուկ քննության նյութ դարձնել նորարարության հարցը։ Բանաստեղծներին ու մանավանդ երիտասարդությանը հարկավոր էր բացատրել, որ ետևառաջ նախադասություններով, գլխիվայր տրամաբանությամբ ու արտառոց հանգավորումով գրված գործերը ոչ միայն նորարարություն չեն, ինչպես հաճախ համարվում է, այլև դրանք առհասարակ կապ չունեն պոեզիայի հետ։ Անհրաժեշտ էր...

Անելիք, ինչպես տեսնում ենք, իրոք շատ կար, և Աղաբաբյանը պատանեկան խանդավառությամբ գործի անցավ։ 1956 թ. հրատարակված «Ստեփան Զորյան» (նույնը

ռուսերեն՝ համառոտ, նույն թվականին), 1959 թ. հրատարակված «Ակսել Բակունց» (նույնը որոշ վերամշակումներով 1963 թ., նույնը՝ ռուսերեն, 1965 թ.), «Գուրգեն Մահարի» (1960 թ.), և այլ մենագրությունները եկան հավաստելու, որ գրականագետը իր ինքնուրույն ասելիքն ունի նաև այս հեղինակների կապակցությամբ։ Սովետահայ գրականագիտությունը հարստացավ մեծարժեք գիտական ուսումնասիրություններով, որոնցում հանգամանորեն վերլուծված էր այդ գրողների անցած գրական ուղին, մասնագիտորեն բացահայտված էր նրանց տեղն ու դերը սովետահայ գրականության համընդհանուր շղթայում։ Պատահական չէր, որ Աղաբաբյանի այդ աշխատությունները լայն դրվատանքի արժանացան ինչպես հայ, այնպես էլ ռուսական պարբերականների էջերում։

Իհարկե, իր աշխատություններում չէր թերանում նաև Աղաբաբյանի ղեկավարության ներքո գտնվող բաժինը։ «Սովետահայ գրականության պատմություն» համեստ վերնագիրն ունի 1961 թ. հրատարակված ընդարձակածավալ աշխատության առաջին հատորը, որն իրենով ազդարարում էր սովետահայ գրականագիտության մի նոր, ավելի բարձր աստիճանի սկզբնավորումը (երկրորդ հատոր՝ 1965 թ., երկու հատորները՝ ավելի քան 60 մամուլ)։ Եթե ասենք միայն, որ առաջին անգամ գիտականորեն հիմնավորված՝ դասդասման էր ենթարկվում վերջին հիսուն տարվա ամբողջ գեղարվեստական գրականությունը, մի աշխատանք, որի բարդությունը դժվար չէ պատկերացնել, եթե ասենք, որ առանձին գլուխ-տեսություններով վերլուծվում էր սովետահայ գրականության առանձին էտապները, բնութագրվում էր տվյալ ժամանակաշրջանի գրական ժանրերի համընդհանուր զարգացման պատկերը, հավելենք նաև, որ «Սովետահայ գրականության պատմությունը» իր նախորդը չուներ, և վերջապես, նշենք, որ վերոհիշյալ երկու հատորների հետ կապված ըստ ամենայնի բոլոր աշխատանքների առյուծի բաժինը պատկանում էր Սուրեն Աղաբաբյանին, ապա համապատասխան մեկնաբանություններն արդեն ավելորդ կլինեն։ Այդ երկհատորյակի հենքի վրա 1966 թ. Մոսկվայում մեկ հատորով հրատարակվեց «История Советской армянской литературы» աշխատությունը, և, այսպիսով, առաջին անգամ հնարավոր

եղավ ռուս ընթերցողի սեղանին դնել սովետահայ գրականության համահավաք պատմությունը։

«Սովետահայ գրականության պատմության» առաջին հատորի լույս աշխարհ գալուց մեկ տարի հետո, 1962 թվականին, գրական շուկայում հայտնվեց Եղիշե Չարենցի երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակության առաջին հատորը, որը նյութական կերպարանք էր ստացել Աղաբաբյանի գլխավորած բաժնում։ Բաժնի վարիչի փորձառու աչքը ճիշտ կարողացավ գտնել այդ քրտնաթոր գործի խորագետ կատարողին՝ Ալմաստ Զաքարյանին, որի եռանդուն աշխատանքին ենք պարտական, որ Չարենցը, վերջապես ունեցավ իր չափածո ու արձակ ստեղծագործությունների՝գրեթե լիակատար ժողովածուն։ Ինչպես և այլ դեպքերում՝ Աղաբաբյանը հնարավոր բոլոր ձևերով սատարում էր հատորների հրատարակման աշխատանքին, որոնցից երեքի խմբագիրը ինքն էր։

... Եվ դարձյալ անդուլ էր գրականագետի գրիչը։ 1963-ին հրատարակված «Արձագանքներ» խորագիրը կրող հոդվածների և ուսումնասիրությունների ժողովածուին հաջորդեց «Գրականություն և արդիականություն» մենագրությունը, որտեղ ուսումնասիրվում էր արդի սովետահայ պոեզիայի զարգացման հեռանկարներն ու օրինաչափությունները, արվում էին ուշագրավ, հաճախ համարձակ եզրակացություններ։ Մենք գիտակցաբար չենք հիշատակում Աղաբաբյանի բազմաթիվ հոդվածները, որոնք անընդմեջ երևում են հանրապետության պարբերականներում, չենք հիշատակում նրա հոդվածները, հրատարակված «Вопросы литературы», «Октябрь», «Дружба народов», «Литературная газета», «Советская литература на иностранных языках» և միութենական այլ թերթերում ու ամսագրերում։ Այստեղ նշենք միայն, որ դրանց ընդհանուր թիվը արդեն մոտենում է չորս հարյուրին։

Մեծ աշխատանքը իր հետ բերեց և իր մեծ գնահատանքը։ 1963 թվականին «Ակսել Բակունց» մենագրության համար, Սուրեն Աղաբաբյանին շնորհվում է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, իսկ վերջերս՝ 1969 թվականի վերջերին,

երիտասարդ գիտական կադրեր աճեցնելու բնագավառում ցուցաբերած ջանասիրության համար՝ պրոֆեսորի աստիճան։

Այս ամենի հետևանքով, բանասիրական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Սուրեն Աղաբաբյանը համամիութենական անուն ու հռչակ է ձեռք բերում։ 1964 թ. նա ընտրվում է Մոսկվայում հրատարակվող «Дружба народов» ամսագրի խմբագրական կոլեգիայի անդամ, իսկ Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի ջանքերով հրատարակվող «История многонациональной советской литературы» խորագիրը կրող վեցհատորյակում նրան է հանձնարարված առաջին և երրորդ հատորների հետ տարվող բոլոր աշխատանքները։ Աղաբաբյանին ավելի ու ավելի հաճախ են հրավիրում Մոսկվա, Կիև, Բաքու, Ռիգա՝ ժամանակակից գրականության վերաբերյալ զեկուցումներ կարդալու համար, իսկ այդ հարցերին նվիրված նրա մի հոդվածի մասին գովասանքով արտահայտվեց Իլյա Էրենբուրգը։ 1964 թ. «Литературная газета»-ն գրականության ազգային յուրահատկության խնդիրներին նվիրած քննարկում հայտարարեց, որը եզրափակելու և վերջին խոսքով հանդես գալու իրավունքը վերապահվեց Սուրեն Աղաբաբյանին, իսկ Հայաստանի գրողների միության III և V համագումարներում նրա կարդացած զեկուցումները դրվատանքի արժանացան «Правда» թերթում և այլն։

Երիտասարդական եռանդով այսօր էլ շարունակում է ստեղծագործել Սուրեն Աղաբաբյանը։ Արդեն հրատարակության է հանձնված «Եղիշե Չարենց» ընդարձակ մենագրության առաջին գիրքը, իսկ երկրորդը՝ ընթացքում է, պլանավորված է սկսել Բակունցի երկերի ակադեմիական հրատարակությունը, աշխատանքներ են տարվում «Սովետահայ գրականության պատմության» նոր հրատարակության համար, որը նախորոշում է չորս հատոր...

Արվածը շատ է, անելիքը՝ ավելի շատ։ Մնում է միայն արևշատություն բարեմաղթել բանասիրական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Սուրեն Աղաբաբյանին, որ նա կարողանա մինչև վերջ իրականացնել իր մտահղացումները և իր

բաժնի հետ մեկտեղ հրապարակ հանի նորանոր արժեքավոր աշխատություններ, որոնց կարիքն այնպես զգում են բոլորը։

Երեկոյան Երևան, 1972, № 18, հունվարի 22